

## 29.09. 2006թ. N1 նիստի

1) **Լսելով** ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Գ.Գասպարյանի հաշվետվությունը 2005-2006 ուս. տարվա գարնանային քննաշրջանի արդյունքների մասին, գիտխորհուրդը

### **ՈՐՈՇՈՒՄ Է**

1. Ի գիտություն ընդունել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Գ. Գասպարյանի հաղորդումը 2005-2006 ուս. տարվա գարնանային քննաշրջանի արդյունքների մասին:
2. 2005-2006 ուս. տարվա գարնանային քննաշրջանի արդյունքները համարել բավարար:
3. Արձանագրել, որ 2005-2006 ուս. տարվա երկրորդ կիսամյակի առաջադիմության բարձրագույն տոկոսը (79.3%), քննաշրջանին միայն գերազանց (260) և գերազանց ու լավ գնահատականներով (382) հանձնած ուսանողների առավելագույն թիվը թե պետպատվեր, թե վճարովի համակարգերում ապահովել է օտար լեզուների ֆակուլտետը:
4. Համարել բավարար օտար լեզուների և լեզվաբանություն և միջմշակութային հաղորդակցություն ֆակուլտետների առաջին կուրսի ուսանողների առաջադիմության վարկանիշային գնահատման փորձի կիրառումն ուսանողական նպաստների տրամադրման գործընթացում:
5. Համալսարանի N 7, 01.03.06 թ. գիտական խորհրդի որոշման 6-րդ կետի հանձնարարականի կատարումը համարել բավարար («Ռուսաց լեզվի, գրականության և օտար լեզուների ֆակուլտետի կրեդիտային համակարգին անցնելու նախապատրաստական աշխատանքների վերաբերյալ»):
6. Հանձնարարել օտար լեզուների և լեզվաբանություն և միջմշակութային հաղորդակցություն ֆակուլտետների խորհուրդներին մինչև ս.թ. հոկտեմբերի 30-ը ամփոփել կրեդիտային համակարգի (ՀՀ Կառավարության 22.12.05 N2307-Ն որոշման 3.ա կետի կատարման ուղղությամբ) փորձի ներդրման արդյունքները և ներկայացնել համալսարանի գիտխորհրդի քննարկմանը:
7. Հանձնարարել բոլոր ֆակուլտետներին խստագույնս կատարել համալսարանի, գիտական խորհրդի 24.05.06 թ. N 9 որոշման («Բոլոնիայի գործընթացի սկզբունքների կիրառումը ԵրՊԼՀ-ում») հանձնարարականները և արդյունքները դարձնել ֆակուլտետային խորհուրդների քննարկման առարկա:
8. Հանձնարարել համալսարանի բոլոր ֆակուլտետներին ապահովել համապատասխան խորհուրդների կողմից մշակված միջոցառումների կատարումը 2006-2007 ուս. տարում կրեդիտային համակարգի լիակատար ներդրումն ապահովելու նպատակով:

9. Հանձնարարել համալսարանի բոլոր ֆակուլտետների կրեդիտային համակարգի կոորդինատորներին մինչև ս.թ. նոյեմբերի 1-ը մշակել և ֆակուլտետների խորհուրդների հաստատմանը ներկայացնել 2006-2007 ուս. տարվա աշխատանքային պլանները:
10. Հանձնարարել ռուսաց և օտար լեզուների ֆակուլտետի խորհրդին 2006-2007 ուս. տարվա ձմեռային քննաշրջանի ավարտին քննարկել ժամանակակից ռուսաց լեզվի դասավանդման նոր ծրագրերի կատարման ընթացքը և արդյունքների մասին զեկուցել համալսարանի գիտական խորհրդին:
11. Հանձնարարել համալսարանի բոլոր ֆակուլտետներին մինչև ս.թ. նոյեմբերի 1-ը ամփոփել «լավագույն ուսանողական խումբ», «լավագույն կուրս», «լավագույն ուսանող» ստուգատեսի արդյունքները և ներկայացնել դրանք համալսարանի գիտական խորհրդի հաստատմանը:
12. Սույն որոշման կատարման պատասխանատվությունը դնել ֆակուլտետների ղեկանների, իսկ հսկողությունը՝ ուսումնական մասի վրա:

\*\*\*\*

**Լսելով** համալսարանի գրադարանի վարիչ Ն.Սարումյանի զեկույցը գրադարանի հեռանկարային զարգացման ծրագրերի մասին, գիտխորհուրդը

#### **ՈՐՈՇՈՒՄ Է**

1. Ընդունել ի գիտություն Ն.Սարումյանի զեկուցումը գիտական գրադարանի զարգացման ծրագրերի վերաբերյալ:
2. Հանձնարարել Ն.Սարումյանին վերանայելու որոշման նախագիծը և այն ներկայացնել ռեկտորատի հաստատմանը:

\*\*\*\*

**Լսելով** ուսխորհրդի նախագահ Մ.Բարեղամյանի հաղորդումը ուս.խորհրդի կանոնադրության վերաբերյալ գիտխորհուրդը

#### **ՈՐՈՇՈՒՄ Է**

Մասնակի փոփոխություններով հաստատել ուսխորհրդի կանոնադրությունը:

\*\*\*\*

## 20.10. 2006թ. N2 նիստի

1) **Լսելով** ռուսաց և սլավոնական լեզվաբանության ամբիոնի վարիչ Լ.Մարկոսյանի զեկուցումը ԵրՊԼՀ-ում ռուսագիտության զարգացման հեռանկարների մասին՝ գիտխորհուրդը

### **ՈՐՈՇՈՒՄ Է**

1. Ռուսաց և սլավոնական լեզվաբանության ամբիոնի կատարած աշխատանքը գնահատել բավարար՝ նշելով ամբիոնի դրական տեղաշարժերը:
2. Արձանագրել, որ ռուսերենի և ռուսագիտության զարգացման ուղղությամբ մինչ օրս անհրաժեշտ աշխատանք է տարվել հետևյալ ուղղություններով.  
ա/ ստեղծվել են դասավանդման նոր պահանջներին համապատասխանող ծրագրեր և դասագրքեր,  
բ/ աշխատանք է տարվել երիտասարդ գիտնականների հետ,
3. Ձեկուցման մեջ նշված ծրագրային հիմնադրույթների նպատակով.
  - 3.1 Հանձնարարել ռուսաց և սլավոնական լեզվաբանության ամբիոնին մինչև 2007թ. մայիս ամիսը համապատասխանացնել բոլոր առարկայական ծրագրերը կրեդիտային համակարգի ծրագրերին և արդիականացնել այդ ծրագրերի բովանդակությունը:
  - 3.2 Մինչև 2007թ. հունիսը հրատարակել տեսական և գործնական դասընթացները, ինչպես նաև մշակել և ներկայացնել դրանց էլեկտրոնային տարբերակները:
  - 3.3 Անցկացնել գործող սեմինարներ, որոնք ուսանողներին կուղղորդեն հետազայում կուրսային աշխատանքներ գրելիս:
4. Հանձնարարել ռուսաց և սլավոնական լեզվաբանության ամբիոնին մանկավարժության, հոգեբանության և ռուս գրականության ամբիոնների հետ համատեղ մշակել 1-ին կուրսի ուսանողների համար ռուսաց լեզվի ներածության դասընթացներ:
5. Հաստատել սերտ կապեր լեզվական ամբիոնների հետ՝ մասնավորապես հայագիտության ամբիոնի հետ՝ զուգադրական բնույթի գիտահետազոտական աշխատանքներ համատեղ իրականացնելու նպատակով:
6. Հանձնարարել ռուսաց և սլավոնական լեզվաբանության ամբիոնին համակարգչային բաժնի օժանդակությամբ տեխնիկական միջոցներ ներդնել ռուսաց լեզվի դասավանդման ընթացքում:
7. Ձարգացնել կապերը միջազգային համապատասխան ուսումնական հաստատությունների և այլ կառույցների հետ: Առանձնահատուկ ուշադրություն դարձնել սլավոնական լեզուների զարգացմանը՝ որպես 2-րդ մասնագիտության:
8. Պարբերաբար անցկացնել ուսանողական օլիմպիադաներ՝ ներգրավելով նաև այլ բուհերի ուսանողներին:

9. Թարմացնել ռուսաց և սլավոնական լեզվաբանության ամբիոնի կայքը և այնտեղ ընդգրկել ամբիոնի մասին բոլոր անհրաժեշտ տեղեկությունները:
10. Հանձնարարել ռուսաց և սլավոնական լեզվաբանության ամբիոնին ավելի մեծ ուշադրություն դարձնել գործնական ռուսաց լեզվի դասավանդմանը օտար լեզուների ֆակուլտետում և լեզվաբանություն և միջնակութային հաղորդակցություն ֆակուլտետում: Հանձնարարել այդ երկու ֆակուլտետների դեկաններին իրենց խորհուրդներում քննարկել ռուսաց լեզվի և ռուսագիտության դրվածքը իրենց ֆակուլտետներում:
11. Հանձնարարել ռուսաց լեզու, գրականություն և օտար լեզուներ ֆակուլտետի դեկանին ֆակուլտետային խորհրդում քննարկել և մինչև ս/թ մայիս ամիսը գիտխորհրդի հաստատմանը ներկայացնել ռուսաց լեզվի և սլավոնագիտության զարգացման ծրագրերը:

\*\*\*\*

2) **Լսելով** ՀՀ ԳԱԱ թղթակից անդամների թեկնածուների առաջադրման հարցի մասին՝ գիտխորհուրդը

#### **ՈՐՈՇՈՒՄ Է**

Հինք ընդունելով ԵրՊԼՀ-ի ամբիոնների կողմից ՀՀ ԳԱԱ թղթակից անդամի ընտրության համար առաջարկված Սուրեն Զոլյանի միասնական թեկնածությունը՝ կազմակերպել բաց քվեարկություն:

Բաց քվեարկությանը մասնակցեցին ԵրՊԼՀ-ի գիտական խորհրդի 55 անդամներից ներկա 50 անդամներ, որոնք միաձայն քվեարկեցին «լեզվաբանություն» մասնագիտության գծով ՀՀ ԳԱԱ թղթակից անդամության համար Բ.Գ.Դ., պրոֆեսոր Սուրեն Զոլյանի թեկնածությունն առաջադրելու օգտին:

\*\*\*\*